ՍԵՐԳԵՅ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Ծնվել է 1874թ., Թիֆլիսում: Հեղափոխական գործունեության մեջ ներգրավվել է 1901 թվականից, մասնակցել է <<Բանվորի ձայն>> (1906), <<Բակինսկի ռաբոչի>> (1906), <<Օրեր>> (1907) թերթերի հրատարակմանը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ս. Մարտիկյանի բնակարանը եղել է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի հավաքատեղիներից մեկը (1914թ. օգոստոսին նրա բնակարանում տեղի է ունեցվել ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի խորհրդակցություն): 1917թ. այդ բնակարանում էր տեղավորված ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի <<Սոցիալ-դեմոկրատ>> հայերեն թերթի խմբագրությունը:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ընտրվել է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի անդամ: Բաքվի կոմունայի պաշտպանության օրերին կազմակերպել և ղեկավարել է մարտական ջոկատ: Կոմունայի պարտությունից հետո՝ մինչև 1919թ. ապրիլը, գործել է Աստրախանում, այնուհետև ՌԿ(բ)Կ կենտկոմի հանձնարարությամբ եկել է Հայաստան:

1920թ. հունիսին բանտարկվել է: Խորհրդային կարգերի հաստատումից հետո պատասխանատու պաշտոններ է վարել կուսակցական և սովետական մարմիններում:

1930թ. եղել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ. պաշտոնավարել է մինչև 1931 թվականը:

1931-1936թթ. եղել է ՀԽՍՀ ժողտնտխորհի, ՀԽՍՀ, ապա՝ ԱՍՖՍՀ կենտգործկոմի նախագահ: Եղել է կուսակցության մի շարք համագումարների պատգամավոր: Պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Մահացել է 1957 թվականին: